# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը

2011 թվականի դեկտեմբերի 5-ին կայացել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով:

Ստորև ներկայացվում է ժողովի կողմից ընդունված որոշումը (ժողովի արձանագրությունը կազմվել է 06.12.2011թ.-ին):

Վ. Բեգլարյան — Գլխավոր Տնօրեն, Տնօրենների Խորհրդի անդամ

(ստորագրություն)

««ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբեր 2011 թ. N 1

**ք.Ստեփանակերտ**

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.5 կետի ա) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր

ժողովի 05.12.2011թ. 3/2011 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է՝

1. Ընկերության կանոնադրության 6.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 650.000.000 (տասը միլիարդ վեց հարյուր հիսուն միլիոն) դրամ, որը բաժանված է 10 650 000 (տասը միլիոն վեց հարյուր հիսուն հազար) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի, յուրաքանչյուրը 1.000 դրամ անվանական արժեքով:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 10 650 000 (տասը միլիոն վեց հարյուր հիսուն հազար) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են բաժնետերերին և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 4.450.000 (չորս միլիոն չորս հարյուր հիսուն հազար) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում:»:

2. Ընկերության գլխավոր տնօրենին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ռեգիստրի Ստեփանակերտի տարածքային բաժին ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ նշված փոփոխությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

**Խորհրդի նախագահ՝** **Ս. Թևոսյան»**